*Նոր Հաճնի համայնքապետարան*

*Պայմանագիր № «ԿՄՆՀՀ ԳՀԱՇՁԲ25/25-1»*

*ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ*

# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ՆՈՐ ԳԵՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ, ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ




## Գիրք 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

*Երևան 2025*

SHINMASTER LLC
CONSTRUCTION & DESIGN

*Տնօրեն* *Ռ. Բաղալյան*

# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ՆՈՐ ԳԵՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ, ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

## *ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ*

Ընդհանուր դրույթներ

Գիրք 1 - Բացատրական մաս

Աշխատանքների կազմակերպում

Գիրք 2 - Գծագրական մաս և աշխատանքային ծավալներ

Գիրք 3 - Նախահաշիվ

# <u>ԳԻՐՔ – 1</u>

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

***Ընդհանուր դրույթներ***

- Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրում կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման տեխնիկական բնութագիր:
- Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրում կոյուղագծի կառուցման ճարտարապետահատակագծային առաջադրանք:
- Երկրաբանական պայմանների մասին եզրակացություն:
- Լիցենզիաներ և լիցենզիայի ներդիրներ:
- Ելից 58/ 23.07.2025թ. գրություն Նոր Հաճնի համայնքապետին:
- Նոր Հաճնի համայնքապետի պատասխան գրություն:
- Երկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

***Բացատրական մաս***

- Աշխատանքային նախագծի բացատրագիր:

***Աշխատանքների կազմակերպում***

- Աշխատանքների կազմակերպման ընդհանուր դրույթներ և բացատրական մաս

# *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

*Հավելված N 1*
*«   21   » հուլիսի 2025 թ. կնքված*
*ԿՄՆՀՀ ԳՀԱՇՁԲ25/25-1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 71241200 | Նախատեսվում է իրականացնել Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի բնակավայրի Արցախի փողոցի 620 ± 20%  Գծմ կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:<br>Նախագիծը պետք է ներառի, բայց չսահմանափակվի ներքոհիշյալ աշխատանքները<br>• Աշխատանքային նախագիծ. Համաձայն նորմերի<br>• Կատարել տեղանքի հետազոտություն և տալ գեոդեզիական արդյունավետ լուծումներ<br>• Նախագծման ժամանակ համապատասխան մասնագետի միջոցով կատարել հիդրավլիկ հաշվարկ<br>• Նախագծել  կոյուղագիծը համապատասխան Փ=(200-400)մմ խողովակներով`<br>• Նախագծել ե/բետոնյա դիտահորեր դիտահորեր՝ տրամաչափը և քանակը ըստ նորմերի և անհրաժեշտության<br>• Ետլիցքի գերակշռող մասը նախատեսել ավազով<br>• Ներկայացնել Էսքիզային նախագիծ եռաչափ տարածական գունավոր պատկերներով, ճարտարապետական փոքր ձևերի հատուկ ներկայացմամբ<br>• Հատակագծային լուծումները 1:200 մաշտաբով, ընդհանուր հատակագծային սխեման 1:500 մաշտաբով<br>Կոյուղագծի հատվածների կոնկրետ վայրերը և հասցեները նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ :<br>Կոմունիկացիանների համաձայնեցում շահագրգիր կազմակերպությունների հետ<br><br>Ապահովել փորձաքննության աշխատանքային կարգը փոխգործակցելով Պատվիրատուի ու Փորձաքննողի հետ:<br>**Տես ստորև՝**<br>***Ձեռքբերվող Աշխատանքների նկարագիրը.** | Դրամ | 690000 | 690000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օր: |

*** Ձեռքբերվող Աշխատանքների նկարագիրը.**

1. Կազմել և Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել մանրամասն նախագծային առաջադրանքը.

2. Նախագծանախահաշվային փաստաթղթերը իրականացնել` հայտերի բացման օրվա դրությամբ գործող Հայաստանի Հանրապետությունում շինարարական նորմերի և կանոնների համաձայն.( ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.12.2020թ. N 105-Ն հրաման, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ N12-Ն «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմեր):

2.1. 1-ին չափաբաժնի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակելիս հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժվելու համար պայմաններ նախատեսել ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշման համաձայն:

3. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով և լինեն ընթեռնելի.

4. Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել հայերեն և ռուսերեն լեզուներով, ներկայացնել 4 թղթային օրինակով և էլեկտրոնային կրիչով.

5. Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված բաժինները`

- Ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումներ.
- Ներքին և արտաքին ինժեներական ցանցեր.
- Շինարարական աշխատանքների կազմակերպում, օրացույցային գրաֆիկ.
- Գծանշում
- Ճանապարհային նշանների տեղադրում
- Նախահաշիվ.
- Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ.
- Անհրաժեշտության դեպքում իրականացնել երկրաբանական հետազոտություն:
- Համաձայնեցումներ` նախագիծը համաձայնեցնել Պատվիրատուի և շահագրգիռ կազմակերպությունների հետ.
- Ծավալաթերթ` ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռներով:
- Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջներ: Ներկայացնել շինարարական աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները.
- Նախագծանախահաշվային փաստաթղթերում ներառել նաև շինարարական աշխատանքներում օգտագործվող ապրանքների, սարքերի, սարքավորումների տեխնիկական բնութագրերը (ապրանքների ամբողջական նկարագրերը):

6.Անհրաժեշտության դեպքում համագործակցել <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտել աբոնենտների քանակը և խմելու ջրի ներքին ցանցի/ հեղեղատար, կոյուղատար/ անհրաժեշտ հզորությունը: Միացման կետերի տեխնիկական պայմանները <<Վեոլիա Ջուր >> ՓԲԸ-ից ստանալու է Պատվիրատուն:

7.Անհրաժեշտության դեպքում համագործակցել <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտել աբոնենտների քանակը և գազատար ներքին ցանցի անհրաժեշտ հզորությունը: Միացման կետերի տեխնիկական պայմանները <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ից ստանալու է Պատվիրատուն:

*Ռուսերեն և հայերեն լեզուներով հրապարակված հայտարարության և (կամ) հրավերի տեքստերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:*

# «ԳԵՈԶՈՆ»

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**Տարածք՝** ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՆՈՐ ԳԵՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԿՈՅՈՒՂՈՒ ՈՒՂԵԳԻԾ

# ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ




Լիցենզիա ՔՊԼ-000308

Պատվիրատու՝ «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ

Ներդիր ՔՊՆ-000308-11

Տնօրեն՝ Դ. Ասատրյան

Ճարտարագետ-երկրաբան՝ Դ. Ասատրյան

Երևան – 2025

ՀՀ ք. Երևան, Բաշինջաղյան 169շ/44բն. ☎ (094) 400661 E-mail asatrian.79@mail.ru

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Լիցենզիա, ներդիր (նմուշի օրինակ)---------------------------------------------------------------3

Բացատրական մաս-------------------------------------------------------------------------------------6

Ներածություն--------------------------------------------------------------------------------------------6

1. Ընդհանուր տեղեկություններ------------------------------------------------------------------------7

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը-------------------------------------------9

3. Եզրակացություն-------------------------------------------------------------------------------------11

4. Օգտագործված գրականության ցանկ-------------------------------------------------------------12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000308, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնքի Նոր Գեղի բնակավայրի Արզականի փողոց Մեքենաշինողների կոճակի ուղեգիծ

ՏՐՎԱԾ Է

2024-08-23, «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ Փ., 169, 44 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG56-3579-8DC9-3CE6

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000308-11

«ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ ՀՀ [illegible]

23.08.2024թ.

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ UGFA-424E-155A-2C7E

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code)

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
| --- | --- | --- | --- |
| ԴԱՎԻԹ ԱՍԱՏՐՅԱՆ | Հ | 000714 | 2024-07-09 |

ՀՀ Կոտայքի մարզ, Չոր Հանձո համայնքի՝ Չոր Գ.Նժդեհ Շմավոնյանի
Արզականի փողոցի վերակառուցվող կոչվող [illegible]

ՀԱՎԻՉ ՀԱՄԱՐ՝ UGFA 424E 155A 2C7E
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

## Ներածություն

1.«ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից Ճարտարագետ-երկրաբանի կոորդինացմամբ և ղեկավարմամբ, համապատասխան ՀՀՇՆ-1-2,01-99-ի, ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնքի՝ Նոր Գեղի բնակավայրի Արցախի փողոցի վերակառուցվող կոյուղու ուղեգծի ինժեներաերկրաբանական կառուցվածքի, գրունտների կարգերի պարզաբանման նպատակով իրականացվել են ճարտարագիտաերկրաբանական ուսումնասիրություններ:

2. Աշխատանքները իրականացվել են **«ԳԵՈԶՈՆ»** ՍՊԸ-ի կողմից **«ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ**-ի պատվերով: Աշխատանքների իրականացման նպատակն է, համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի, ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնքի՝ Նոր Գեղի բնակավայրի Արցախի փողոցի վերակառուցվող կոյուղու ուղեգծի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան եզրակացության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

**Ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ.**

1. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:

2. Տեղադիտական հետազննություններով վերհանել վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները, եթե դրանք առկա են (սողանք, քարաթափում, ճահճացում և այլ):

3. Գոյություն ունեցող փոսորակների խրամուղիների և տեղանքում արխիվային նյութերի միջոցով պարզաբանել գրունտների շերտերը և դրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը:

4. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը՝ կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:

5. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ամփոփում:

6. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Տեղանքը՝ ըստ ՀՀՇՆ-1-2,01-99-ի ինժեներաերկրաբանական պայմանների, I-ին կարգի տեղամաս է:

Ուսումնասիրվող տարածքի տեղազննումը կատարվել է 2025 թվականի հուլիս ամսին: Ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոսորակները, խրամուղիները, հարակից տարածքների բնական կտրվածքները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տեղանքի մանրամասն ուսումնասիրության և գոյություն ունեցող բնական բացվածքների, տեղանքում առկա կտրվածքների հիման վրա տվյալ տարածքում գրունտները պարզ են դարձել:

**Ուսումնասիրվող տեղանքի գծագիր**



## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրական տեսակետից տարածքը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնքի՝ Նոր Գեղի բնակավայրում:

**<u>Գեոմորֆոլոգիական տեսակետից</u>** ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզում: Տարածքին բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդերի լանջերը: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 1369.0-1383.0 մետրերի սահմաններում:

**<u>Երկրաբանական կառուցվածքում</u>** մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով: Ուսումնասիրվող տարածքը ներկայացված է վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները և դրանց խճաբեկորները, էլյուվիալ-դելյուվիալ նստվածքները կավավազների ավազակավերի տեսքով:




**<u>Կլիման</u>** ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի, Նոր Հաճն համայնքում, ուստի տրված է դրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ամառը՝ հուլիսի օգոստոսի միջին ամսական ջերմաստիճանը 22,3˚C է: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 65% (ժ.15-ին): Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -4,5˚C է: Ստորև աղյուսակի տեսքով տրված է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Արզնիի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, ˚C

| Բնակա-վայրի անվա-նումը | Բարձրու-թյունը ծովի մակար-դակից, մ | Օդի միջին ամսական, ըստ ամիսների ˚C | | | | | | | | | | | | Միջին տարե-կան | Բացար-ձակ նվազա-գույն | Բացար-ձակ առավե-լագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Արզնի | 1262 | -4.5 | -2.5 | 2.8 | 9.5 | 14.2 | 18.7 | 22.3 | 22.3 | 18.2 | 11.5 | 4.9 | -1.3 | 9.7 | -28 | 38 |

Օդի հարաբերական խոնավությունը (%)

| Բնակա-վայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը. % | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | միջինը ժամը 15-ին | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | ամենա-ցուրտ ամսվա | Ամենաշոգ ամսվա |
| Արզնի | 78 | 74 | 67 | 65 | 64 | 58 | 53 | 49 | 57 | 65 | 74 | 79 | 65 | - | - |

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

| Բնակա-վայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը | | | | | | | | | | | | | Ձյան ծածկույթը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | տարե-կան | տասնօրյա առավելա-գույնը, սմ | օրերի թիվը | ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Արզնի | 34/14 | 43/20 | 44/23 | 58/33 | 77/30 | 40/24 | 25/30 | 16/23 | 26/42 | 34/25 | 40/19 | 38/39 | 475/42 | - | 69 | - |

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 24մ/վ է, 50 տարվա ընթացքում 29մ/վ:

Քամու արագության ճնշումը՝ 45կգ/մ$^2$:

Ձյան բեռնվածքի ճնշումը 70կգու/մ$^2$ է: Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, առավելագույն խորությունը կկազմի 70սմ:




Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

**<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u>** տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ:

**<u>Ֆիզիկաերկրաբանական</u>** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

**Շրջանի սեյսմիկ պայմանները**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

## 2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ առկա բնական կտրվածքների, փոսորակների, նախկինում հորատման և արխիվային նյութերի տվյալների (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա), ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ **բազալտի խիճը, խճավազները կավավազի լցիչով, խճաբեկորներ գրունտները**:

Տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են հետևյալ 2 ինժեներաերկրաբանական (ԻԵՏ) տարրերը կամ շերտերը վերևից–ներքև.

Շերտ1- Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով, (ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):

Շերտ2- Բազալտի խիճ, խճավազներ, բեկորներ, կավավազային լցիչով:

ՈՒսումնասիրվող ուղեգծի համար գրունտները տրվում են մինչև 3.0 մ խորությամբ և երկրորդ շերտի գրունտի կարգը տրված է տոկոսային հարաբերությամբ. (տես ստորև):

**ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնքի՝ Նոր Գեղի բնակավայրի Արցախի փողոցի**

**վերակառուցվող կոյուղու ուղեգծի գրունտները տրվում են երկու շերտով:**

**Կոլեկտոր Կ1 Նկ0+00-Նկ3+05**

**Շերտ1 0.0-0.4մ** Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով:
Ծավալային կշիռը՝ 2.0տ/մ$^3$
Հաշվարկային ճնշումը՝ 350կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 5.4) IV կարգ է:

**Շերտ2 0.4-3.0մ** Բազալտի խիճ, խճավազներ, բեկորներ,
կավավազային լցիչով:
Ծավալային կշիռը՝ համապատասխան կարգերի 2,2-2,4տ/մ$^3$
Հաշվարկային ճնշումը՝ համապատասխան կարգերի 500-600կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 40% 5.5)Vp / 40% 5.5)V, 20% 16.3) VI կարգ են:

**Կ1 Նկ3+05-Նկ6+45**

**Շերտ1 0.0-0.2մ** Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով,
(ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):
Ծավալային կշիռը՝ 1.9տ/մ$^3$
Հաշվարկային ճնշումը՝ 350կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 12.IVp կարգ է:

**Շերտ2 0.2-3.0մ** Բազալտի խիճ, խճավազներ, բեկորներ
կավավազային լցիչով:
Ծավալային կշիռը՝ համապատասխան կարգերի 2,2-2,4տ/մ$^3$
Հաշվարկային ճնշումը՝ համապատասխան կարգերի 500-600կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 40% 5.5)Vp / 40% 5.5)V, 20% 16.3) VI կարգ են:

# 3.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնքի՝ Նոր Գեղի բնակավայրում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում ծովի մակարդակից տատանվում են՝ 1369.0-1383.0 մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 2 շերտով:
- Ուսումնասիրվող տեղամասում ուսումնասիրվող ուղեգծով, որպես հիմնատակ գրունտները հուսալի են:
- Համաձայն ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:
- Տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը քարաթափությունը, ճահճացումը՝ բացակայում են:
- Ուսումնասիրվող տեղամասում փոսորակները կամ խրամուղիները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ հարկ լինելու դեպքում ինժեներ-երկրաբանի կողմից կատարել գրունտների ճշգրտում:

Ճարտարագետ-երկրաբան՝ Դ. Ասատրյան

# 4. Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ  Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն  Ց Ա Ն Կ


1. ГОСТ 25100-2020. Грунты. Классификация.
2. ՀՀՇՆ IV 10.01.01-2006 “ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ”
3. ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ-101 «**Բնահողերի և ապարների դասակարգում»**
4. ՀՀՇՆ 20-04.2020թ.-Երկրաշարժադիմացկուն շինարարություն
5. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար։ «Հիմնական դրույթներ»
6. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»
7. Геология АрмССР том 1 Геоморфология 1961г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000545, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-03, «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԵՐԶՆԿՅԱՆ Փ., 22, 26 ԲՆ.

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 03.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG6F-1488-AE35-26A2**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000545-08

*(ներդիրի սերիան, համարը)*

«ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ (ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՄԵԼԻՈՐԱՑԻԱ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

03.09.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 03.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGD2-1B13-1C1E-39CD**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
|---|---|---|---|
| ԳԱԲՐԻԵԼ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ | Հ | 000217 | 2024-05-08 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGD2-1B13-1C1E-39CD**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

# ՇԻՆՄԱՍՏԵՐ ՍՊԸ

Հեռ. 098 41 04 04 ՀՀ, ք.Երևան, Երզնկյան 22շ. բն. 26
E-mail: shinmaster.llc@mail.ru


Ելից 58/23.07.2025թ.

**Նոր Հաճընի համայնքապետարանի**
**համայնքի ղեկավար**
**պարոն Գ. Մաթևոսյանին**

Հարգելի պարոն Մաթևոսյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Նոր Հաճընի համայնքապետարանի պատվերով «Շինմաստեր» ՍՊԸ-ի կողմից 21.07.2025թ.-ին կնքված **N «ԿՄՆՀՀ ԳՀԱՇՁԲ25/25-1»** պայմանագրի շրջանակներում իրականացվում է **«Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի բնակավայրի Արցախի փողոցի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ»** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ։

Մրցութային փաստաթղթերի մշակման և աշխատանքների ծավալների գնահատման համար խնդրում ենք տրամադրել տվյալներ՝ շինարարության ընթացքում առաջացող ավելցուկային բնահողի և շինարարական աղբի տեղափոխման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, փափուկ բնահողի բերման տարածքների հեռավորությունները համայնքից։

Հարգանքով՝

«Շինմաստեր» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Բաղալյան՝ __________________________ Կ.Տ.

@mail Главная Почта Облако Календарь Документы Mail Space Покупки Все проекты

Поиск по почте | Ваши покупки

Написать письмо

- Входящие
- Նախագծողներ / CV
- Отправленные
- Черновики
- Архив
- Спам
- Корзина Очистить
- Новая папка

Удалить | В архив | В папку | Спам | ... | Ответить | Переслать

## Աղբավայրի կորդինատները.xlsx

Municipality of Nor Hachn 24 июля, 10:12
Кому: вам

Перевод: Английский ⇄ Русский Перевести




1 файл Скачать (10 КБ) Сохранить в Облако

Ձեզ ենք տրամադրում աղբավայրերի կորդինատները:

--
Municipality of Nor Hachn
Отправлено из Почты Mail

Настройки

| Աղբավայրի կոորդինատները | | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 8463443.4207 | 4466474.1783 |
| 2 | 8463443.5576 | 4466466.7887 |
| 3 | 8463447.6831 | 4466452.3615 |
| 4 | 8463457.6474 | 4466441.7616 |
| 5 | 8463496.3166 | 4466434.6193 |
| 6 | 8463544.6426 | 4466406.1464 |
| 7 | 8463560.0920 | 4466411.1633 |
| 8 | 8463563.3268 | 4466425.2766 |
| 9 | 8463584.9143 | 4466420.8170 |
| 10 | 8463601.6705 | 4466426.5093 |
| 11 | 8463612.3944 | 4466441.9117 |
| 12 | 8463603.7309 | 4466461.1060 |
| 13 | 8463571.2871 | 4466476.1569 |
| 14 | 8463563.5624 | 4466485.8048 |
| 15 | 8463561.6312 | 4466501.2416 |
| 16 | 8463577.4669 | 4466525.1686 |
| 17 | 8463564.3348 | 4466549.4815 |
| 18 | 8463540.0020 | 4466556.4280 |
| 19 | 8463527.6425 | 4466539.8335 |
| 20 | 8463495.9712 | 4466522.0812 |
| 21 | 8463499.1590 | 4466506.0506 |
| 22 | 8463443.4207 | 4466474.1783 |

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

## ՀԱՇՎԵԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### Նախնական տվյալներ և մոտեցումներ

Սույն աշխատանքային նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի կողմից --------.2025թ. տրված թիվ --- նախագծման թույլտվությունը:

Նախատեսվում է կառուցել կոյուղագիծ Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի բնակավայրում:

Նախնական տվյալներն են.

- Հեռացվող կեղտաջրի տիպը՝ կենցաղային,
- Սպասարկվող առանձնատների քանակը – 60 հատ (ներկայում գոյություն ունի 45 տուն, սակայն գլխավոր հատակագծով նախատեսվում է ավելացում՝ մինչև 60-ը),
- Բնակելի առանձնատներից կենցաղային կեղտաջրերի հաշվարկային միջին օրական ջրահեռացումը ընդունվել է հավասար հաշվարկային միջին օրական ջրօգտագործմանը՝ համաձայն ՀՀՇՆ 40.01.02 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերի (ՀՀՇՆ 40-01.03-2022 «ԿՈՅՈՒՂԻ. ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ», 53 կետ): Հաշվի առնելով վերը նշվածը, սույն նախագծի հաշվարկներում ջրահեռացման նորմն ընդունվել է 210լ/օր, մարդ,
- Նախագծվող կոյուղագծով տեղափոխվող կեղտաջրերի հեռացման համար այն միացվում է գոյություն ունեցող Ø300 մմ տրամագծով ջրահեռացման խողովակին: Միացումն իրականացվում է գոյություն ունեցող դիտահորում, որի վերակառուցումը նույնպես նախատեսվում է սույն աշխատանքային նախագծի շրջանակում,
- Օգտագործվող խողովակների տեսակը՝ ակոսավոր, պոլիէթիլենային, ոչ ճնշումային, SN 8 տիպի:

### Կեղտաջրի հաշվային ելքերի որոշումը

Անհատական բնակելի շենքերից կեղտաջրերի հաշվարկային ծախսերը դիտարկվել են որպես ՀՀՇՆ 40-01.01 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» (այսուհետ՝ ՀՀՇՆ 40-01.01) շինարարական նորմերով որոշվող կենտրոնացված ելքեր (ՀՀՇՆ 40-01.03-2022 «ԿՈՅՈՒՂԻ. ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ», 54 կետ):

Սպասարկվող սանիտարական սարքերի թվքանակի որոշման նպատակով ընդունվում է, որ յուրաքանչյուր բնակելի առանձնատանը տեղադրված է միջինը 5 սանիտարական սարք (խոհանոցային կոնք, լվացարան, զուգարանակոնք, լոգնոց կամ լոգատաշտակ և ջրահեռացման ներքին ցանցին միացող ավտոմատ լվացքի մեքենա):

Սպասարկվող սանիտարական սարքերի ընդհանուր թվաքանակը կլինի.

$N_{ընդ}$ = 300 սարք:

Նախագծվող կոյուղագծի հաշվային տեղամասերում առավելագույն վայրկյանային ելքերը որոշվում են հետևյալ բանաձևով.

$$q_{i\,tot} = 5\alpha\, q_0^{tot} \text{ լ/վ:}$$

Որտեղ, $q_0^{tot}$-ը դա սանիտարական սարքի ընդհանուր ջրածախսն է, բնակելի և հասարակական շենքերում, որոնց վերաբերյալ բացակայում են ջրի ելքի և սարքավորանքի վերաբերյալ տվյալները, թույլատրվում է ընդունել $q_0^{tot}$= 0.3 լ/վ :

α-ն գործակից է, որը կախված է տվյալ հաշվային տեղամասի կողմից սպասարկվող սանիտարական սարքերի թվաքանակի և դրանց միաժամանակյա գործելու հավանականության ( արտադրյալից: Հաշվի առնելով NP արտադրյալը, α-ի արժեքն ընդունվում է ՀՀՇՆ 40-01.01 Հավելված 4-ի 2-րդ աղյուսակից (քանի որ P < 0.1):

$$P = \frac{q_{hr.u}\, U}{3600 q_0 N}, \text{ որտեղ,}$$

$q_{hr.u}$-ն սարքավորանքի ընդհանուր ժամային ջրածախսն է, որն ընդունվում է ՀՀՇՆ 40-01.01 3-րդ հավելվածի: Ընդունվում է $q_{hr.u} = 13$ լ/ժ:

$U$ -ն տվյալ հաշվային տեղամասի կողմից սպասարկվող ջրասպառողների թվաքանակն է, որի արժեքը, հաշվարկների պարզության համար ընդունվում է, որ յուրաքանչյուր առանձնատան բնակիչների թիվը հավասար է տեղադրված սարքավորանքի թվին, այսինքն U = N:

$$P = \frac{13}{3600 * 0.3} = 0.01204\text{:}$$

Երբ սարքերի խմբին սպասարկող ջրամատակարարման ցանցում ջրի ընդհանուր առավելագույն վայրկյանային ելքը $q_{tot} \le 8$ լ/վ, ապա կեղտաջրերի առավելագույն վայրկյանային ելքը՝ $q_s$ , լ/վ, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$q_s = q_{tot} + q_{s0}$ ;

որտեղ՝ $q_s$–ը տեղադրված սանիտարատեխնիկական սարքերից ամենամեծ արժեք ունեցող սարքի վայրկյանային ելքն է, որը որոշվում է համաձայն ՀՀՇՆ 40-01.01 2-րդ հավելվածի, տվյալ դեպքում $q_s$–ը զուգարանակոնքի վայրկյանային ելքն է, որը հավասար է $q_{s0}$=1.6 լ/վ:

Նախագծվող կոյուղագծով տեղափոխվող կեղտաջրի ընդհանուր ելքի որոշման համար նախ անհրաժեշտ է որոշել $q_{tot}$-ը:

$$q_{tot} = 5\alpha\, q_0^{tot}:$$

Ինչպես վերը նշվեց, α գործակիցը կախված է NP արտադրյալից, այսինքն.

NP = 300 * 0.01204 = 3.61:

NP-ի նշված արժեքին համապատասխանում է α=2.07 արժեքը, այսինքն.

$q_{tot}$ = 5 * 2.07 * 0.3 =3.1 լ/վ:

Կոյուղագծի վերջում տեղափոխվող կեղտաջրի ընդհանուր ելքը կլինի.

$q_s = q_{tot} + q_{s0}$ = 3.1+1.6 = 4.7 լ/վ:

Վերը ներկայացված մոտեցմամբ նախագծվող կոյուղագծի յուրաքանչյուր հաշվային տեղամասի համար որոշվել են հաշվային ելքերը:

## Նախագծվող կոյուղագծի տրամագծերի որոշումը, թաղման խորությունները և հիդրավլիկական հաշվարկը

Հիդրավլիկական հաշվարկն իրականացվել է համաձայն Лукиных А.Н., Лукиных Н.А. <<Таблицы для гидравлического расчета канализационных сетей>> աղյուսակների:

Նախագծվող կոյուղագծի թաղման խորությունների որոշումն իրականացվել է, հաշվի առնելով վերջինիս վրա արտաքին մեխանիկական ներգործություններին դիմակայման պայմանը, համաձայն որի, կոյուղագծի խողովակաշարի վերին եզրից մինչև փաղացի երթևեկելի մակերևույթն ընկած հեռավորությունը չպետք է փոքր լինի 1 մ-ից (բացառությամբ վերջին 2 տեղամասերի, որտեղ նախատեսվում է կոյուղագծի անցկացում

պողպատե DN400 մմ տրամագծով խողովակի միջով): Դա պայմանավորվում է գոյություն ունեցող կոյուղագծի փոքր խորությամբ:

Առանձնատների ջրահեռացման ներքին ցանցի հետ միացումներն իրականացվել են նոր կառուցվող անկյունային (ԱԴՀ) և գծային դիտահորերում (ԳԴՀ):

Հաշվային տեղամասերի միացումները հիմնականում են իրականացվել են ըստ ջրի հաշվարկային նիշի արժեքների:

Սույն աշխատանքային նախագծի աշխատանքային ծավալներում ներառվել են թվով 45 առանձնատների ջրահեռացման ներքին ցանցի թողարկների հետ միացումները, որոնք յուրաքանչյուր առանձնատան համար կազմում է d e100 մմ տրամագծով SN8 տիպի ակոսավոր պոլիէթիլենային 1 խողովակ =6 մ երկարությամբ:

Հիդրավլիկական հաշվարկի արդյունքներն ամփոփվում են ստորև, Աղյուսակ 1-ում:

**Կոյուղագիծ_Նոր Գեղի**

| Հաշվարկային տեղամաս | Հատվածի երկար. l (մ) | Հաշվ. ելքը $q_{հաշվ}$ լ/վ | Տրամ. d (մմ) | Արագ. v (մ/վ) | Թեքութ. i | Անկումը il (մ) | Լցվածություն | | Նիշեր (մ) | | | | | | Թաղման խորություն (մ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | h/d | h (մ) | Հողի նախ. նիշ | | Ջրի նիշ | | Առվակի նիշ | | | |
| | | | | | | | | | Սկզ | Վերջ | Սկզ | Վերջ | Սկզ | Վերջ | Սկզ | Վերջ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| ԳԴՀ-1 - ԱԴՀ-1 | 45 | 2.25 | 200 | 0.7 | 0.018 | 0.810 | 0.17 | 0.03 | 1380.1 | 1379.19 | 1378.82 | 1378.01 | 1378.79 | 1377.98 | 1.31 | 1.21 |
| ԱԴՀ-1 - ԱԴՀ-2 | 50 | 2.54 | 200 | 0.72 | 0.018 | 0.900 | 0.175 | 0.04 | 1379.19 | 1378.28 | 1378.01 | 1377.11 | 1377.98 | 1377.08 | 1.21 | 1.20 |
| ԱԴՀ-2 - ԳԴՀ-2 | 35 | 2.66 | 200 | 0.74 | 0.018 | 0.630 | 0.185 | 0.04 | 1378.28 | 1377.77 | 1377.11 | 1376.48 | 1377.08 | 1376.45 | 1.20 | 1.32 |
| ԳԴՀ-2 - ԳԴՀ-3 | 22 | 2.77 | 200 | 0.75 | 0.018 | 0.396 | 0.188 | 0.04 | 1377.77 | 1377.4 | 1376.48 | 1376.09 | 1376.45 | 1376.05 | 1.32 | 1.35 |
| ԳԴՀ-3 - ԳԴՀ-4 | 26 | 2.87 | 200 | 0.96 | 0.037 | 0.962 | 0.14 | 0.03 | 1377.4 | 1376.38 | 1376.08 | 1375.12 | 1376.05 | 1375.09 | 1.35 | 1.29 |
| ԳԴՀ-4 - ԳԴՀ-5 | 31 | 2.97 | 200 | 1.02 | 0.037 | 1.147 | 0.15 | 0.03 | 1376.38 | 1375.28 | 1375.12 | 1373.97 | 1375.09 | 1373.94 | 1.29 | 1.34 |
| ԳԴՀ-5 - ԳԴՀ-6 | 24 | 3.06 | 200 | 0.92 | 0.029 | 0.696 | 0.16 | 0.03 | 1375.28 | 1374.58 | 1373.97 | 1373.27 | 1373.94 | 1373.24 | 1.34 | 1.34 |
| ԳԴՀ-6 - ԳԴՀ-7 | 25 | 3.17 | 200 | 0.93 | 0.038 | 0.950 | 0.16 | 0.03 | 1374.58 | 1373.5 | 1373.27 | 1372.32 | 1373.24 | 1372.29 | 1.34 | 1.21 |
| ԳԴՀ-7 - ԳԴՀ-8 | 36 | 3.25 | 200 | 0.9 | 0.027 | 0.972 | 0.17 | 0.03 | 1373.5 | 1372.52 | 1372.32 | 1371.35 | 1372.29 | 1371.32 | 1.21 | 1.20 |
| ԳԴՀ-8 - ԳԴՀ-9 | 26 | 3.39 | 200 | 0.73 | 0.015 | 0.390 | 0.21 | 0.04 | 1372.52 | 1372.13 | 1371.35 | 1370.96 | 1371.31 | 1370.92 | 1.21 | 1.21 |
| ԳԴՀ-9 - ԳԴՀ-10 | 21 | 3.5 | 200 | 0.7 | 0.013 | 0.273 | 0.22 | 0.04 | 1372.13 | 1371.87 | 1370.96 | 1370.69 | 1370.92 | 1370.65 | 1.21 | 1.22 |
| ԳԴՀ-10 - ԳԴՀ-11 | 34 | 3.63 | 200 | 0.72 | 0.013 | 0.442 | 0.21 | 0.04 | 1371.87 | 1371.42 | 1370.69 | 1370.25 | 1370.65 | 1370.20 | 1.22 | 1.22 |
| ԳԴՀ-11 - ԳԴՀ-12 | 27 | 3.75 | 200 | 0.7 | 0.012 | 0.324 | 0.22 | 0.04 | 1371.42 | 1371.17 | 1370.25 | 1369.92 | 1370.20 | 1369.88 | 1.22 | 1.29 |
| ԳԴՀ-12 - ԳԴՀ-13 | 20 | 3.82 | 200 | 0.71 | 0.012 | 0.240 | 0.23 | 0.05 | 1371.17 | 1371 | 1369.92 | 1369.68 | 1369.88 | 1369.64 | 1.29 | 1.36 |
| ԳԴՀ-13 - ԳԴՀ-14 | 21 | 3.94 | 200 | 0.71 | 0.012 | 0.252 | 0.23 | 0.05 | 1371 | 1370.88 | 1369.68 | 1369.43 | 1369.64 | 1369.38 | 1.36 | 1.50 |
| ԳԴՀ-14 - ԱԴՀ-15 | 21 | 4 | 200 | 0.78 | 0.015 | 0.315 | 0.22 | 0.04 | 1370.88 | 1370.53 | 1369.43 | 1369.11 | 1369.38 | 1369.07 | 1.50 | 1.46 |
| ԱԴՀ-15 - ԱԴՀ-16 | 29 | 4.13 | 200 | 0.78 | 0.015 | 0.435 | 0.22 | 0.04 | 1370.53 | 1369.96 | 1369.11 | 1368.68 | 1369.07 | 1368.64 | 1.46 | 1.32 |
| ԱԴՀ-16 - ԳԴՀ-17 | 22 | 4.24 | 200 | 0.87 | 0.021 | 0.462 | 0.21 | 0.04 | 1369.96 | 1369.44 | 1368.68 | 1368.22 | 1368.64 | 1368.18 | 1.32 | 1.26 |
| ԳԴՀ-17 - ԳԴՀ-18 | 28 | 4.34 | 200 | 0.88 | 0.021 | 0.588 | 0.21 | 0.04 | 1369.44 | 1368.82 | 1368.22 | 1367.63 | 1368.18 | 1367.59 | 1.26 | 1.23 |
| ԳԴՀ-18 - ԳԴՀ-19 | 22 | 4.42 | 200 | 1.12 | 0.035 | 0.770 | 0.18 | 0.04 | 1368.82 | 1368.03 | 1367.63 | 1366.86 | 1367.59 | 1366.82 | 1.23 | 1.21 |
| ԳԴՀ-19 - ԱԴՀ-3 | 20 | 4.53 | 200 | 1.13 | 0.035 | 0.700 | 0.18 | 0.04 | 1368.03 | 1367.35 | 1366.86 | 1366.16 | 1366.82 | 1366.12 | 1.21 | 1.23 |
| ԱԴՀ-3 - ԱԴՀ-4 | 30 | 4.64 | 200 | 0.9 | 0.020 | 0.600 | 0.27 | 0.05 | 1367.35 | 1366.28 | 1366.16 | 1365.56 | 1366.11 | 1365.51 | 1.24 | 0.77 |
| ԱԴՀ-4 - ԱԴՀ-5 | 13 | 4.67 | 200 | 0.623 | 0.007 | 0.091 | 0.29 | 0.06 | 1366.28 | 1365.94 | 1365.56 | 1365.47 | 1365.51 | 1365.42 | 0.77 | 0.52 |
| ԱԴՀ-5 - ԳՎԴՀ | 17 | 4.7 | 200 | 0.623 | 0.007 | 0.119 | 0.29 | 0.06 | 1365.94 | 1365.8 | 1365.47 | 1365.35 | 1365.42 | 1365.30 | 0.52 | 0.50 |

## *Աշխատանքների կազմակերպման ընդհանուր դրույթներ և բացատրական մաս*

Սույն նախագծով նախատեսված է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Նոր Հեղի բնակավայրի Արցախի փողոցի ջրահեռացման համակարգի վերակառուցման աշխատանքները:

### *Նպատակները և աշխատանքների ամփոփագիրը*

### *Նպատակները*

« ***Նոր Հաճն համայնքի, Նոր Գեղի բնակավայրի, Արցախի փողոցի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ»*** աշխատանքային նախագիծը, մշակված է համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի պահանջների, ինչպես նաև տեղում իրականացված ուսումնասիրությունների և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում կայացրած որոշումների:

### *Աշխատանքների ամփոփագիր*

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 4 գրքեր՝

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ, բացատրական մաս, աշխատանքների կազմակերպում

Գիրք 2.1 Գծագրական մաս

Գիրք 2.2 Աշխատանքային ծավալներ

Գիրք 3 - Նախահաշիվներ

### *Շինհրապարակների գտնվելու վայրը*

Շինհրապարակները գտնվում են ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի, Նոր Գեղի բնակավայրի, Արցախի փողոցում:

*Ընդհանուր տեղեկություն շինհրապարակների և գոյություն ունեցող կառուցվածքների մասին*

*Շինհրապարակներ*

